

21.03. 2013

գ. Արգինա

ՀՀ Արմավիրի մարզի Արգինա համայնքի ղեկավարի 2012 թ երկրորդ
Կիսամյակի աշխատանքային գործունեության վերաբերյալ.

Արգինա համայնքում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի հաշվետու ժողով
Ժողովին մասնակցում էին Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետարանի տրանսպորտի վարչության պետի տեղակալ Համլետ
Կուրդինյանը, ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ,
գյուղապետարանի աշխատակիցներ:

Նախագահությամբ համայնքի ղեկավար Մ. Գրիգորյանի
Քարտուղարությամբ՝ աշխտակազմի քարտուղար Ս. Հարությունյանի
Զեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավար Մ. Գրիգորյանը
Հարգելի հյուրեր, Արգինա համայնքի բնակիչներ.

Թույլ տվեք Ձեր ուշադրությունը հրավիրել իմ՝ համայնքի ղեկավարի , գյուղապե-
տարանի աշխատակազմի կողմից 2012 թ երկրորդ կիսամյակում կատարած
աշխատանքների մասին՝ ըստ համապատասխան բնագավառների.

Մոցիպակյան բնագավառում՝

Կառուցվել է դպրոցի գուգարանը, անասունների համար տեղադրվել է խմելաջրի
երկաթյա խմոցներ, համայնքում պարբերաբար իրականացվում է փողոցների
աղբաթափության աշխատանքներ, մասնակի վերանորոգվել են համայնքի
ներսի փողոցները:

Համայնքի երեսուներեկ ընտանիքների հատկացվել է 1500.0 հազար դրամ միանը-
վագ դրամական օգնություն՝ որից երկու ընտանիքների ծնողի անժամանակ
մահվան կապակցությամբ:

Կազմակերպվել է համայնքի երեխաներին տարվան նվիրված տոնահանդես,
որից հետո շուրջ ութսուն երեխաների բաժանվել են տոնական նվերներ:

Հաշվետու ժամանակաշրջանում հրավիրվել և անցկացվել է ավագանու ինն
նիստեր, որոնց ընթացքում քննարկվել են համայնքին հուզող տարաբնույթ հար-
ցեր, ընդունվել են որոշումներ և հետամուտ եղել դրանց կատարմանը:

Երկրորդ կիսամյակի ընթացքում հավաքագրվել են՝

1. հողի հարկ 4737.1 հազար դրամ, գույքահարկ 252.8 հազար դրամ ,
տեղական տուրքեր՝ 36.6 հազար դրամ հողի վարձավճար՝ 763.7 հազար դրամ:

Կազմակերպվել և անցկացվել են աշնանային գորակոչի աշխատանքները:

Աշնանը համայնքի սեփականատերերի կողմից կատարվել է տասը հա ցորենի
ցանք, որը սակայն ոռոգման ջրի պատճառով մնաց առանց ոռոգման և
չձլարձակվեց,կասկածի տակ դնելով սպավող բերքն ամբողջությամբ:

Արմավիրի մարզպետարան , ինչպես ն սև տարբեր կազմակերպություններ են


ուղարկվել շուրջ հիսուն տարաբնույթ գրություններ , հաշվետվություններ:
Քաղաքացիներից ստացվել են քսանից ավելի տարբեր դիմումներ, որոնք ստացել
են իրենց դրական պատասխանները, ինչպես նաև տրամադրվել են հարյուրից
ավելի տարբեր բնույթի տեղեկանքներ:


Համայնքի հիմնախնդիրներն են՝

Համայնքի թիվ մեկ խնդիր է հանդիսանում համայնքի տնամերձների ոռոգումը
Տնամերձները ոռոգվում են պոմպակայանից մղվող ջրով, ինչը գյուղին տրա-
մադրվում է բավականին ուշ ժամկետներում, հաճախակի ընդհատումներով,
իսկ աշնան սկզբներին ընդհանրապես դադարեցվում է:

Գյուղի խմելաջրի, ոռոգման ջրի ներքին փակ ցանցերը գտնվում են վթարային
վիճակում, որի պատճառով մեծ են ջրի կորուստները, այդ իսկ պատճառով
ենթակա են փոփոխման և վերանորոգման:

Համայնքը չունի մշակույթի տուն, գյուղապետարանի շենք, գազաֆիկացված չէ,
փողոցները գտնվում են անբարեկարգ վիճակում, հաճախակի կարկտահարու-
թյունները մեծ վնասներ են պատճառում գյուղատնտեսական արտադրությանը:
Գյուղից մեծ թիվ են կազմում արտագնա աշխատանքի մեկնողները:

Արգինա համայնքի ղեկավար՝  Մ. Գրիգորյան



Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արզինա համայնքի
ղեկավարի հաշվետու ժողովի նիստի արձանագրությունից

21.01 2013 թ

գ. Արզինա

Արզինա համայնքում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի հաշվետու ժողով:
Ժողովին մասնակցում էին Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետարանի տրանսպորտի վարչության պետի տեղակալ Համլետ
Կուրդինյանը, ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ,
գյուղապետարանի աշխատակիցներ:

Նախագահությամբ՝ համայնքի ղեկավար Մ. Գրիգորյանի
Քարտուղարությամբ՝ աշխատակազմի քարտուղար Ս. Հարությունյանի


Օ Ր Ա Վ Ա Ր Գ

Արզինա համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2012 թվականի երկրորդ
կիսամյակի գործունեության վերաբերյալ:

Լսեցին 1.- Արզինա համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2012 թվականի
երկրորդ կիսամյակի գործունեության վերաբերյալ:

Արզինա համայնքի ընդհանուր ժողովը որոշում է՝

Արզինա համայնքի ղեկավարի 2012 թվականի երկրորդ կիսամյակի
գործունեությունը գնահատել բավարար:

Արզինա համայնքի ղեկավար՝  Մ. Գրիգորյան

